
ՀԱՅԲԵՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԲԱԼԱՅԱՆ Ն. Մ.

Արշակ Չոպանյանի ողջ գրական ժառանգությունը նոր ժամանակներում առանձնապես արժեքավորեցին Կառլեն Դալլաքյանը «Արշակ Չոպանյան» մենագրությունում և Աելիտա Դուլիսանյանը «Արշակ Չոպանյանը և հայ հին գրականությունը» աշխատությունում: Նրանք համակողմանիորեն քննեցին Չոպանյանի ստեղծագործական, հրապարակախոսական, գրաքննադատական անձնվեր գործունեությունը, շեշտեցին որակական այն հատկանիշները, որոնցով Չոպանյանը հաստիք ուշադրություն էր նվիրաբերում հայ միջնադարյան գրականությանը:

Դուլիսանյանի աշխատությունը նորովի է ներկայացնում Չոպանյան գրականագետ-քննադատին նաև այն առումով, որ հայ գրականության պատմության մեջ առաջին անգամ թարգմանվում և մեկնաբանվում են Չոպանյանի ֆրանսերեն հրատարակված գրքերն ու զեկույցները:

Բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, հրապարակախոս, հրատարակիչ Ա. Չոպանյանը ավելի քան հայրենիքի զինվոր էր: Նրա շնորհիվ հայ և օտար հանրությունները ծանոթացան միմյանց գրական հուշար-ձաններին: Հայ միջնադարյան գրականության գանձերը հայտնաբերելն ու հրատարակելը, թարգմանելն ու օտարներին ներկայացնելը դառնում են Չոպանյանի հայրենանվեր գործունեության կիզակետը:

Չոպանյանի՝ հայ միջնադարյան գրականությանը նվիրված ուսումնասիրությունների ստվար մասը հայրեններին առնչվող գրական երկասիրություններն ու հողվածներն են: Քննադատի համար իսկական գյուտ էր միջնադարյան այդ տաղաշարքերի հայտնաբերումը. յուրաքանչյուր տաղի հայտնաբերմանը հաջորդում էր դրա տպագրությունը, քանզի, ըստ Չոպանյանի, գրասեր հանրությունը պետք է իմանա իր կորսված գրական արժեքների մասին և ըստ արժանավայն գնահատի դրանք:

Հայրենների առաջին ժողովածուն Չոպանյանը վերնագրել է «Նահապետ Քուչակի դիվանը» (1903), երկրորդը՝ «Հատընտիր էջեր քուչակյան տաղաշարքեն» (1926), հաջորդը՝ «Հայրեններու բուրաստան» (1930): Վերջինիս առաջաբանն իր գաղափարական ենթաշերտերով և հայրենների քանակական առումով առավել ընդգրկուն է, իսկ դրանց հրատարակությունների ժամանակահատվածում լույս տեսած «Հայ էջեր»-ում (1912), ֆրանսերենով հրատարակած մի քանի աշխատություններում և առանձին հողվածներում, ինչպես նաև հետագա թվականների ուսումնասիրություններում նա այս կամ այն կերպ անդրադարձել է հայրենների խնդիրներին: Հարկ է նշել, որ քննադատը հաճախ փոփոխել է իր տեսակետները, վերանայել նախորդները, երբեմն ուրիշների ազդեցությամբ հակադրվել իր իսկ՝ արդեն հայտնած տեսակետին: Այդուհանդերձ, Չոպանյանի վերոնշյալ գրքերում կենտրոնական տեղ են զբաղեցնում հայրենների հեղինակի, ազդեցությունների, լեզվի, մոտիվի, տաղաչափության խնդիրները:

Հաշվի առնելով այն պարագան, որ Չոպանյանը հաճախակի վերանայել է իր նախորդ տեսակետները, ընդամին, դրանք նաև հիմնովին փոխել, ստորև Չոպանյանի առաջ քաշած հիմնահարցերին կանդրադառնանք ժամանակագրային առումով:

Կարծում ենք, որ հայրենները տպագրելիս Չոպանյանի առաջնային խնդիրը եղել է դրանց հեղինակի պատկանելությունը որոշելը: Դեռևս «Դիվանում» (1903) Չոպանյանը անհատական հայրենների շարքին է դասում Հովհաննես Երզնկացու, Ֆրիկի և այլոց ութնյակավոր տաղերը և իրավամբ գտնում, որ դրանցից յուրաքանչյուրը պատկանում է առանձին հեղինակի: Մնացածները, ըստ քննադատի, հավանաբար Նահապետ Քուչակինն են: Այս մտայնության տեղիք է տվել Տեղանցի «Հայերգի» առաջաբանից մի հատված, որտեղ նշվում է. «Այս ծովական գիշերն ի բուն» երգն Նահապետ Քուչակինն է, որ օրինակված է ՌԼԱ (1583) նույն օրինակին հանած է կրկին ՌՃՂԷ (1746) թվին Պետրոս Երեցն»¹: Այս փաստով Չոպանյանը հեղաշրջում է մտցնում հայ գրականության պատմության մեջ. ցայսօր հայրենների մեծ մասը հայ ժողովրդին հայտնի են որպես Նահապետ Քուչակի ստեղծագործություններ: Դեռևս 1927 թվականին իր «Հին գուսանական երգերը» աշխատությունում հայրենները Նահապետ Քուչակի անվան հետ կապելու գործում Չոպանյանի խաղացած դերի մասին Մ. Աբեղյանը գրում է. «Բայց և այնպես այդ տաղերն ընդարձակ շրջանի հասարակության ծանոթացնողը եղել է նա, միաժամանակ նա եղել է, սակայն և «մեծ բանաստեղծ» Նահապետ Քուչակի համբավի տարածողը. նա աշուղ Քուչակին վերագրել է և հետագայում շարունակում է վերագրել զանազան աղբյուրներից հանած անանուն և նույնիսկ հեղինակների անուն կրող երգեր (խրատական). մինչդեռ նա կարող էր, Տեղանցի ասածի վրա հիմնվելով, միայն «Հայերգ» տաղաշարքը դնել այդ աշուղի անունով»²:

Ըստ Չոպանյանի՝ հույժ կարևոր էր, որ հայրենների շարքերը տարածվել էին գրասեր հասարակայնության բոլոր խավերի մեջ, և, անշուշտ, դրանք պետք է ճանաչվեին որևէ (տվյալ դեպքում՝ Քուչակ) անունով: Բայց սուկ այս բացատրությամբ չի սահմանափակվում Չոպանյանը: Հետագա տարիներին ևս նա անդրադառնում է Քուչակի, նրա անվան, ծնված ու ապրած վայրերի բացատրություններին, ընդ որում, նա սկզբնապես հայրենների հեղինակին համարում է ակնեցի, որը իր կյանքի վերջին մասն անցկացրել է, մահացել ու թաղվել Վանի Խառակոնիս գյուղում³: Այնուհետև 1906 թվականի նամակում, գրում է, որ իր ապացույցների շնորհիվ տարակույս անգամ չունի, որ Խառակոնիսում ապրած Քուչակ կամ Քոչեկ անունով աշուղը բնավ հայրենների հեղինակը չէ⁴: Թեպետ 1907 թ. «Անահիտ» հանդեսում նա գրում է, թե Քուչակի տաղերը հորինող բանաստեղծը ապրել է հայրենների ստեղծումից շատ առաջ, և ինքն է ստեղծել Ակնա բանաստեղծական ոճը, կամ թե ժողո-

¹ Չոպանյան Ա., Հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1930, էջ 13:

² Աբեղյան Մ., Երկեր, հ. Բ, Ե., 1967, էջ 15:

³ Տե՛ս Չոպանյան Ա., Դիվանի հավելված, Փարիզ, 1903:

⁴ Նույն տեղում:

վուրդն է ստեղծել, հետագայում մի Քուչակ դրանք գեղագրել է և յուրովի ընթրօրինակել:

Գրականագետի՝ այս հարցի կապակցությամբ բազում տարիներ տևած բազմապիսի տարակույաներն ի վերջո ասես կոնկրետանում են 1940 թ. «Հայրեններու բուրաստանը» գրքում, որտեղ Չոպանյանը Քուչակի անունը արդեն միայն պայմանականորեն է գործածում՝ հայրենները համարելով Քուչակին վերագրված: Թեպետ նորից մերժելով հայրենների ժողովրդական ծագումը՝ շեշտում է դրանց մեկ հեղինակի պատկանելը⁵: Հետաքրքիր է, որ քննադատը գրականագիտական գործերում հաճախ քննվող շատ հարցեր յուրատեսակ կտրվածքով է դիտում: Եթե պակասում են փաստերը, նա անմիջապես օգնության ձեռք է պարզում Չոպանյան բանաստեղծին, որից տուժում է գիտնականի օբյեկտիվությունը: Այդօրինակ պահվածքը նվազեցնում է նրա՝ գրաքննադատական գործերի արժանիքները:

Չընդունելով Նահապետ Քուչակին իբրև հայրենների հեղինակի՝ Չոպանյանը հենց այդպես է ստուգաբանում *Քուչակ* բառը. գտնում է, որ *քուչակ*, *քոչակ* մականունը առաջացել է *քոչվոր* բառից՝ *վաչկատուն*, թափառական իմաստով: «Արդյո՞ք այդ է ճշտագույն մեկնությունը Քուչակ անունին, չեմ գիտեր, բայց ապահովապես ասիկա ամենեն *«բանաստեղծականն»* է»⁶: Նման ձևով նա կարծում է, թե *հայրեն* նշանակում է երգեր հորինել «հայկական երաժշտությամբ և ոճով»: Նա հիմնավորած եզրակացություն չի անում այդ առթիվ, ինչը անում է Ասատուր Մնացականյանը, որը կարծում է, թե *հայրենի* հասկացությունը ծագել է *հայր* արմատից⁷: Կարծում ենք, որ Չոպանյանը այս և նման բանավիճալին հարցերում դրսևորել է շրջահայացություն. նա ուղղակի շրջանցել է այս հարցերը՝ կա՛մ համապատասխան հարցադրումների բացակայության պատճառով, կա՛մ գուցե կարևորություն չտալով դրանց:

Ազդեցությունների հարցերը քննելիս Չոպանյանը կարևորում է նախևառաջ պարսկական ազդեցության գործոնը, առավելապես ուժի և գեղեցկության գովերգման պատկերների ներթափանցումը հայրեններ պարսկական պոեզիայից. ուժի և գեղեցկության գովերգումը բխում է դեռևս հայ հին գրականության դարավոր արմատներից. դեռ հին հեթանոսական բանահյուսական երգերում այս հատկանիշներն են երգվել:

Երկու տասնամյակ անց միայն Չոպանյանը պարզորոշ շեշտում է վերոնշյալ կարծիքը՝ գտնելով հայրենների և գողթան երգերի միջև առկա նմանությունները: «Ատոնք անշուշտ ամենեն ավելի կապ ունին Հայոց հնագույն հեթանոսական գուսաներգության հետ, անոնց միջնադարյան կերպավորումն են այդ բանաստեղծությանը քրիստոնեության ներգործությունը հայտնապես կրած ըլլալով հանդերձ՝ ազգային կնիք մը պահե և հելլեն շունչի մը իրացմամբ ինքզինքը կը նրբացնե միայն, պարսից,

⁵ Տե՛ս **Չոպանյան Ա.**, Հայրեններու բուրաստանը, էջ 102:

⁶ Նույն տեղում, էջ 93:

⁷ Տե՛ս **Մնացականյան Ա.**, Հայրեններ, Ե., 1995, էջ 34:

արաբաց և թրքաց լեզվեն ժողովրդական բանաստեղծությունեն խառնե տարբեր՝ զանոնք իր հատուկ գեղեցկագիտության հարմարցնելով անոնցով իր բնիկ հրապույրը ճոխացնելու համար»⁸: Ինչ վերաբերում է հունական և թուրքական ազդեցություններին, Չոպանյանը մշտապես նշում է առաջինի գերակայությունը, իսկ երկրորդին, ընդունելով որոշ տարրերի առկայությունը, ծանրակշիռ դեր չի հատկացնում:

Պետք է շեշտենք նաև Չոպանյանի էության ուրույն մի հատկանիշը՝ անսահման հայրենասիրությունը, որի լույսի ներքո նա բազմիցս բացահայտումներ է անում անգամ քննադատության մեջ: Հայրենասիրական վեհ մղումները գրականության մեջ որսում են բացառապես հայեցի դրսևորում. հայրենները, շնորհիվ հայկական ոգու ու շնչի, առանձնանում են համաշխարհային գրականության անսահման հռչակությունում:

Անդրադառնալով լեզվի խնդրին՝ Չոպանյանը նկատում է, որ այն համեմատաբար հեռու է ոսկեդարյան մաքրությունից, չունի դրա «հասուն ու օծուն կամ սիրալիր ու մեծ վայելուչ պերճությունը, բայց գարնանավերջին վառ գույներով թարմ պտուղի երիտասարդ ու կանաչ գույն ու սուր զորեղ համն ունի»⁹: Չուտ բանաստեղծական որակավորմամբ է սահմանափակվում քննադատը հայրենների լեզվի հարցը քննելիս և առավել հանգամանակից խոսում հայրենների մոտիվների մասին: Չոպանյանը հայրենները բաժանում է երեք կարգի՝ սիրո, պանդուխտի, խրատական և այլաբանական: Մոտիվային շերտերով առաջնահերթ առանձնացնում է սիրային հայրենները: Հետաքրքիր դիտարկում է այն, որ քննադատը սիրային հայրենների համար անձնական ստեղծագործական թեզը շատ ճշմարտանման է ընդունում, բայց և թվարկելով՝ նշում է սիրո բազմաթիվ դրսևորումներն ու երանգները: Արդյոք մեկ հեղինակը իր ողջ կյանքի ընթացքում կապրեր սիրո բոլոր այս ելևէջումները, որ նշել է քննադատը: «Անոնց մեջ (հայրենների, լրացումը՝ իմա) սերը վերլուծված, նկարված, երգված, սրբացված, փառաբանված, կատակաբանված է իր բոլոր երեվոյթներով, սերը ցավագին կամ երանավետ, միամիտ կամ խորամանկ, մաքուր կամ ցոփ, դյուցազնական կամ վայելումով, զուտ սրտալից կամ զուտ տոփական, երագուն կամ իրապաշտ, պարզ ու բնական կամ տեսակ մը զգայական միստիքականությամբ խոսուն»¹⁰: Ըստ էության, որսալով այս և ուրիշ գծեր՝ Չոպանյանը չի էլ ակնարկում, որ դրանք գնում են ժողովրդական երգերի խորքերը: Կարծում ենք, գրաքննադատը առաջինն է իրավացիորեն իսկական բանաստեղծություններ համարում սիրո հեշտասեր, ամոթխածությունն արհամարհող պահերով լեցուն հայրենները:

Պանդխտության թեմայով գրված հայրենները Չոպանյանը մանրագնին չի քննում: Նշենք միայն, որ նա ըստ արժանվույն է գնահատում դրանք, ավելին՝ ընդգծում է դրանց ժողովրդական բնույթը:

Հայրենների տաղաչափական խնդիրները ևս իրենց տեղն են գտել Չոպանյանի հարցադրումների շրջանակում: Կարող ենք նշել, որ քննադատը համակողմանիորեն չի քննել խնդրո առարկան: Հայրենների տաղաչափա-

⁸ Չոպանյան Ա., Հատընտիր էջեր, Փարիզ, 1926, էջ 9:

⁹ Չոպանյան Ա., Երկեր, Ե., 1988, էջ 352:

¹⁰ Չոպանյան Ա., Հատընտիր էջեր, էջ 12:

կան խոր քննություն է կատարել Մանուկ Աբեղյանը: Եթե նա հայրենները համարում է կարճ բեյթերով (տներով) հորինված գազելներ կամ քառյակներ կամ քառյակների միացումներ կամ թե մի շարք նույնահանգ կամ տողընդմեջ նույնահանգ բեյթեր, ապա Չոպանյանը գտնում է, որ դա այդպես չէ. ըստ նրա՝ կիսատողերից շատերը իրենց հանգն ունեն, և դա է պատճառը, որ Աբեղյանն ընդունել է իբրև լրիվ տող՝ բաժանելով 15-վանկանի տողը 2 տողի՝ 7-8 չափով, մեկ բեյթը տունն է, իսկ 2 տունը՝ քառյակ: Չոպանյանը գտնում է, որ 15-վանկանի տողը չպետք է բաժանել 2 տողի՝ 7-8 չափով, քանզի 7 և 8-վանկանոց առանձին տողերում կրկնվող հանգը ոչ միշտ է ներկա: Ավելին՝ Չոպանյանը կարծում է, որ այդ հանգը «ներքին հանգ» ըսված զարդն է, ներդաշնակությունը ավելցրնելու միջոց մը»¹¹: Անհրաժեշտ վերլուծություն չկատարելը Չոպանյանին հանգեցրել է սխալ եզրահանգման: Եթե նա առավել խոր քննության ենթարկեր հայրենների տաղաչափությունը, գուցե համաձայներ Աբեղյանի այն կարծիքին, որ հայրենները երգվել են 7-8 չափով¹²:

Քննադատի սխալը նախևառաջ հայրենների հանգերի, ներքին հան- գի ընդունման մեջ էր: Նրա՝ տաղաչափության հարցերի մանրամասն նկարագիրը ժամանակի քննությանը չդիմացավ: Այդուհանդերձ, նա այն եզակի գրականագետներից է, որի պատկառելի գրականագիտական ժառանգությունը և ազգանպաստ գործունեությունը ծածկում են նրա թերացումները:

Չոպանյանի՝ մի ժամանակ գրած տողերը՝ «Ճանչանք մենք մեզ և ճանչցնենք օտարին»¹³, մեկընդմիջտ դառնում են նրա նշանաբանը, որով մինչև իր կյանքի վերջ ղեկավարվում է քննադատը, և որի լույսով պետք է գնահատենք Արշակ Չոպանյանին և հայ միջնադարյան գրականության ոլորտում ունեցած նրա վաստակը:

ИССЛЕДОВАНИЕ АЙРЕНОВ В РАБОТАХ АРШАКА ЧОПАНЯНА

БАЛАЯН Н. М.

Резюме

В литературной критике А. Чопаняна особое место занимают айрены, которые приписываются Наапету Кучаку.

А. Чопанян был одним из первых литературных критиков, исследовавших вопросы авторства айренов, их литературного влияния, языка и стиля, мотивов, стихосложения. Благодаря критике А. Чопаняна, эти великолепные образцы средневековой армянской литературы стали известны под именем Наапета Кучака, получив мировое признание.

¹¹ Չոպանյան Ա., Երկեր, էջ 345:

¹² Այս մասին խոսում է նաև Ս. Մնացականյանը՝ մանրամասն քննության ենթարկելով հայրենների հանգավորման տարբեր եղանակներ: Տե՛ս Մնացականյան Ա., նշվ. աշխ., էջ 13:

¹³ Չոպանյան Ա., Դիվանի հավելված, էջ 39: